

ՆԻ ՄԱՍՆԻԿՐ ԵՎ ՆՐԱ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ԻՄԱՍՏԱՅՈՒՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Ա. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Նի մասնիկը հայերենի մի քանի բարբառներում¹ բավականաչափ կենսունակ տարր է. նրա հարադրությամբ կազմվում են բազմաթիվ բայական հարադրություններ և այլ կապակցություններ, որոնք թե՛ կազմության ու կառուցվածքի, և թե՛ իմաստային տարբեր հարաբերությունների դրսևորման տեսակետից, անշուշտ, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Մեր մասնագիտական գրականության մեջ, սակայն, հիշյալ մասնիկի վերաբերյալ շատ քիչ բան է ասված, ուստի խնդիրը մնում է տակավին շուտամնասիրված և կարոտ համակողմանի քննության: Թեև այդ հարցը, ինչպես նշեցինք, առանձին ուսումնասիրության առարկա չի եղել, բայց ճիշտ-ի բառակազմական դերը ժամանակին նկատել են վաստակաշատ գիտնականներ Հր. Աճառյանը, Ս. Ամատունին և Ստ. Մալխասյանը²:

Ավելի քան կես դար առաջ Ս. Ամատունին իր «Հայոց բառ ու բան» հանրահայտ բառարանում գավառական բառերի շարքում դրել է նաև նի մասնիկով կազմված ութ բայ, ցույց տվել նրանց արտահայտած մի քանի նշանակությունները: Կարևոր է ընդգծել, որ հեղինակի կողմից բերված բայաձևերը հաս-

¹ Նկատի է առնվում մասնավորաբար Արարատյան, Ղարաբաղի, Հաղրութի, Մեղրու բարբառները, ինչպես նաև ուսի ճյուղի մի շարք խոսվածքներ:

² Նի մասնիկի ծագման ու նշանակության մասին, որքան մեզ հայտնի է, առաջին անգամ խոսել է պրոֆ. է. Աղայանը իր «Մեղրու բարբառ» աշխատության մեջ՝ նախ 1941-ին (տե՛ս Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատությունների» 19-րդ հատորը) և ասպա՛հույն աշխատության վերանայված ու ամրողացված օրինակում, որ լույս է տեսել 1954-ին՝ ԳԱ Լեզվի ինստիտուտի մականիշով (էջ 170—171): Այնուհետև հիշյալ մասնիկի և նրանով կազմված բառերի վերաբերյալ ամփոփ գրել է տողերիս հեղինակը գեո 1948 թ. իր «Ուսումնասիրություն Հաղրութի բարբառի» անտիպ ղիսերտացիայում (էջ 109—120), որ հետո առանձին հոգվածով հրապարակվել է ժեղմիածին» ամսագրի 1952 թ. մարտ-ապրիլ համարում, ասպա՛մասնակի փոփոխություններով այն զետեղված է «Հաղրութի բարբառը» աշխատության մեջ (էջ 300—304), որ լույս է տեսել 1965-ին: Նի մասնիկի մի քանի նշանակությունների մասին չատ հակիրճ գրել է Ա. Բարայանը իր «Նի. լլու (լու) և իմ մասնիկները Ղարաբաղի բարբառում» հոգվածում (տե՛ս առանձնատիպ «Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի ղիտական աշխատությունների ժողովածուից», № 6, I մաս, էջ 225—235): Քննարկվող մասնիկի վերաբերյալ նշում ունի նաև Ա. Գրիգորյանն իր «Հալ բարբառագիտության դասընթացի» (Երևան, 1957) 275-րդ էջում: Եվ, վերջապես, Նի մասնիկին անցողակի անդրադարձել է Ալ. Մարգարյանը «Հայերենի հարադիր բայերը» մենագրության (Երևան, 1966), 137-րդ էջի ծանոթության մեջ:

³ Տե՛ս Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 502—503: Հր. Աճառյան, Հայերենի գավառական բառարան (սեմինյան ազգագրական ժողովածու», հատ. Թ. Թիֆլիս, 1913, էջ 813): Ստ. Մալխասյան, Հայերենի բացատրական բառարան, Երևան, 1945, հատ. 3, էջ 461:

տատված են գրական վկայություններով և միաժամանակ նշված են նրանց գործածության ոլորտներն ու տարածման վայրերը: Քիչ ավելի ուշ, 1913-ին Հր. Աճառյանը իր «Գավառական բառարանում» բերում է նի մասնիկով կազմված յոթ բայ (գալ (նի գալ), լինել (նի լինել), քողել (նի թողել), կենալ (նի կենալ), կացնել (նի կացնել), մնալ (նի մնալ), տալ (նի տալ) համապատասխան վկայություններով՝ ցույց տալով դրանց նշանակություններն ու տարածման վայրերը:

Ուսումնասիրվող մասնիկի վերաբերյալ Ս. Ամատունու և Հր. Աճառյանի կատարած աշխատանքը որոշ լրացումներով ամփոփված է Ստ. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարանում», ուր հեղինակը բերում է նի մասնիկով բաղադրված 12 բայ, նշում նրանց նշանակությունները և տալիս օրինակներ, սակայն առանց ցույց տալու աղբյուրները և գործածության վայրերը, մի բան, որ որոշակի դժվարություն է հարուցում թե՛ ուսումնասիրողի, և թե՛ առհասարակ բառարանից օգտվել ցանկացող յուրաքանչյուրի համար:

Սրանք են նի մասնիկի վերաբերյալ եղած մեզ հայտնի տվյալներն ու աղբյուրները:

Ուսումնասիրողի համար առանձնակի կարևորություն ունի այն հարցը, թե ի՞նչ ծագում ունի կամ ինչպե՞ս է ձևավորվել մեզ հետաքրքրող մասնիկը, արդյո՞ք մենք ունենք մի նախաձեռն առաջացած կամ ստացված նի, որ գործածվում է և՛ բայերի հետ, որպես նախադրություն, և՛ գոյականների ու դերանունների հետ, որպես ետադրություն, թե՛ բայակազմության մասնակցող նի-ն կազմությամբ ու բնութիվով տարբեր է իբրև ետադրություն գործածվող նի-ից:

Հարցի պարզաբանման համար անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ է. Աղայանի՝ Սեդրու բարբառի հոլովման համակարգի վերաբերյալ արած ուշադրավ դիտողություններից մեկին, որ վերաբերում է նի մասնիկին: Վերը նշված իր աշխատության § 302-ում է. Աղայանը գրում է. «Տարածության ու տեղի գործիականի և ներգոյականի համար գործածվում է նաև -նէ հետադրությունը, որ պահանջում է որոշյալ հայցականով խնդիր. ինչպես՝ Պատընէ կախ տօր «պատով (— պատից) կախ տուր». Թօ՝ մբընէ գ'ի՝ նէս իմ, «Թմբովը զընում եմ». Պուճախընէ դիր «անկյունում դիր». Հըղէննէ մին մարդը գ'ի՝նէս «ձանապարհով (ձանապարհի միջով) մի մարդ է գնում». Արտարընէ շօըր նուս «արտերում ման է գալիս». Կուրէննէ գ'ի՝նէ մէ «ակոսի միջով մի գնա» և այլն: Իրականում այս մի առանձին հոլովի գեր է կատարում,— շարունակում է հեղինակը,— որ աշխարհաբարում չունենք. կարելի է համարել տեղական (locativus) հոլովին համապատասխան, իբրև շարժում ցույց տվող բայերի պարադա՝ տարածությունը (ոչ ուղղությունը), տեղը ցույց տալու համար: Այս մասնիկը,— ասված է այնուհետև,— մեր կարծիքով ստացվել է գրաբարյան ներքն բառից, որ սղմամբ դարձել է նի՛. այդ նույն իբրև նախադրություն դրսևում ենք նաև բայերի մեջ՝ նոր բառեր կազմելու և գործողության դեպի ներս ուղղված լինելը ցույց տալու համար, համապատասխան ուսերեն Ե, լատիներեն in, հայերեն՝ ներ— նախածանցներին. ինչպես՝ նէ մըտիլ «ներս մտնել»—

⁴ Ստ. Մալխասյանն այդ մասնիկը համարում է մակբայ՝ վրա, դեմ, ետ և այլ նշանակություններով: Այնուհետև նշում է, որ գործածվում է բայերի սկզբին, կազմելով բաղադրյալ բայեր (տե՛ս «Բացատրական բառարան», հատ. 3, էջ 461):

входить, invēnīre, նէ տծիլ «ներածել» — вносите, importare և այլն⁵»։ Աղայանի բացատրությունից հետևում է, որ միևնույն ներս «ներս» բառակից հնչյունների սղմամբ առաջացած նէ մասնիկը երկու դեր է կատարում. մի դեպքում այն, իբրև ետադրություն, դրվում է որոշյալ հայցականով խնդրի հետ՝ արտահայտելով գործիական և ներգոյական հոլովի իմաստ, մյուս դեպքում՝ հարադրվելով բայերին, իբրև նախադրություն, կազմում է նոր բառեր՝ ցույց տալով գործողության դեպի ներս ուղղված լինելը։

Չառարկելով է. Աղայանի՝ մասնավորաբար նի մասնիկի կիրառական նըշանակության վերաբերյալ արված դիտողություններին, այնուամենայնիվ, մեզ թվում է թե այստեղ մենք գործ ունենք համանունության երևույթի հետ, այն, որ երկու տարբեր բառակերպից միանգամայն տարբեր ճանապարհով ստացվել են նույն հնչյունակազմով երկու նէ (նի), մեկը՝ հավանաբար առաջացած զրաբարյան ի ներս > ներս բառից, մյուսը՝ մի այլ ձևից, որի մասին կխոսվի քիչ հետո։

Հայտնի է, որ «մեջ» հնդեվրոպական նախաձևից հին հայերենում կազմված ունենք ի ներսոյ, ներսուտ, ներսին, ի ներս և այլն, որոնցից, օրինակ, ի ներս ձևը, իբրև հարադիր, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, միջին հայերենում արդեն տեղի է տվել ի ներս ձևին, ինչպես՝ Ինքն քիչ մն ի դուրս է եկել և ի ներս չի եկել (Ա. Ամաս. Օգուտ. բժշկ., 38), — Գնացեք ի ներս բերեք. Այն խանին դռնակն է բացեր, բացեր ու ներս է գացեր (Մ. Աբեղ. Գուս. ժող. տաղեր, 208) և այլն⁶։

Երբ միջին հայերենում ընդհանրացել էր ներս ձևը, սրանից արդեն դժվար էր անցնել հաջորդ քայլին, այն է՝ նեւ ձևին, որ այսօր էլ կենդանի ու գործածական է մեր շատ բարբառներում ու խոսվածքներում, ինչպես՝ նեւ ու դուս աճել (< ներս ու դուրս ձևից), նեւ գալ, դուս գալ||տուս գալ|| կ'ալ, նէս բերել ||բիրիլ||պիրիլ (< ներս բերել ձևից), դուս բերել ||դուս բիրիլ||պիրիլ (դուրս բերել ձևից) և այլն, և այլն։

Նշված հարադրություններում, անկասկած, վճռական դեր է խաղացել ձեւաբանական առնմանության ու տարնմանության երևույթը, այն, որ դուրս բառը ազդվելով նեւ ձևից, դարձել է դուս, ինչպես որ ցած բառը ազդվելով բարձր ձևից, դարձել է ցածր։ Անշուշտ, նույն հիմունքով է կազմվել եղր ձևը՝ մեղրից։

Եվ այսպես, երբ պատրաստ է նեւ ձևը, սրանից, բնականաբար, սուլական և հնչյունի անկումով ստացվել է այն ձևը, որ այսօր առկա է Մեղրու բարբառում նէ տեսքով և է> ի հնչյունափոխությամբ նի տարբերակով՝ Արարատյան բարբառներում ու նրա խոսվածքներում, Ղարաբաղի, Հաղրուի, Կարճեանի բարբառներում և այլուր։ Այս նի (>նէ) մասնիկը բաղադրվում է բայերին սկզբից՝ կազմելով հարադրական բայեր, որոնք բազմազան նշանակություններ ունեն, ինչպես՝ նի մտնէլ||մըտիլ «ներս մտնել», նի տալ «1. ներս տալ, 2.

5 Մեջ բերված ճ-ից մեր կողմից բաց թողնված տողերում հեղինակն այն միտքն է հայտնում, թե ինչու է ինքն ասում, որ նի-ն կազմում է գործիական ու ներգոյական, — որովհետև, — նշում է Աղայանը, — աշխարհարարում նրան (այսինքն՝ նի-ով կազմված ձևերին — Ա. Պ.) համապատասխանում են գործիականն ու ներգոյականը, իսկ հոլովների մեջ իբրև առանձին հոլով չհիշելն էլ ճշտորեն պատճառարանված է նրանով, որ, օրինակ՝ պատրեմէ հետդրավոր կազմություն ունի, իսկ իրեն ալգպիսին նա, իրոք, հոլովաձև չէ (տե՛ս նույն տեղում)։

6 Հմմտ. Ա. Մ ա ռ գ ա ղ յ ա ն, Հայերենի հարադիր բայերը, էջ 137։

կպցնել», նի գալլ կ'ալ «1. կպչել, դիպչել, 2. վիրավորել», նի կթել «ակնապիշ նալել», նի ելնել||ինիլ «1. վեր բարձրանալ. 2. հեծնել», նի օնել (ունել) «1. վերցնել, 2. սկսել», նի պրուսնել «1. ծեծել, 2. շրջել» և այլն⁷:

Բառակազմության մեջ հանդես եկող նի-ն, սակայն, ինչպես երևում է ուսումնասիրությունից, ավելի հին պատմություն ունի, քան կարելի է ենթադրել: Նի մասնիկն առկա է նախ հայերեն նիստ բառում՝ առաջացած ցեղակից լեզուների ուշժո ձևից, որ պահպանվել է պարսկերենում և լեզուներում է ուժժան «նստել» ձևը, իսկ սոգդիարենում ներկայացել է ուժժան «նստած» տեսքով: Ընդ որում նիստ բառի մեջ արմատն է ստ. նի-ն մասնիկ է. ուրեմն նի + ստ «ցածր կանգնել»⁸: Այնուհետև նի մասնիկի «ցած» ստոր» իմաստը նշմարելի է ռուսերենի низ ածականի, ինչպես և низ||нис նախածանցի բաղադրության մեջ (հմմտ. низколонны «սյան ներքևի՝ ցածր մասը», низвергать «գահավիժել», ниспадать «ցած թափվել»): Հիշյալ ձևերում з||с—ст արմատի բաղադրիչն է, որ անվթար պահպանված է стоять «կանգնել», сто́я «կանգնած» և այլ բառերում:

Նի⁹ նախամասնիկի հանդիպում ենք նաև Ղարաբաղի բարբառում շատ գործածական նրէստու, նրէստալ քարացած ձևերում, որ ըստ իս, հայերեն նիստ||նրէստ բառի բացառական և գործիական հոլովաձևերն են, որոնց մեջ մթազնել է նյութական իմաստը և դարձել կապ ու զրվելով տրական հոլովով կապի խնդրի հետ՝ ստացել է բացառական և գործիական հոլովի իմաստ (օր. Արամէն նրէստալ¹⁰ «Արամից», Արամէն նրէստալ «Արամով»): Հարցի լուսաբանման առիթով կարևոր ենք համարում նշել է. Աղայանի ուշագրավ մի մեկնություն մասին ևս, որ վերաբերում է «հայել», «նայել» բառերին: Ստուգաբանելով հիշյալ բայերը՝ Աղայանը հայել բայի արմատը ճիշտ կերպով համարում է հա-ն, որի վրա ավելացել է յ: Ծագում է հնդեվրոպական *pa նախածանցից, որ ցեղակից լեզուների մեջ պահպանվել է երկու հիմնական իմաստով՝ «պահել, պահպանել» և «հսկել, նայել, դիտել»: Երկրորդ իմաստի հետ, —ասված է այնուհետև,— կապվում է հայել բառը, որ գրաբարում նշանակում էր «նայել, դիտել, ակնակառոյց լինել, սպասել, ակնկալել», որոնք բոլորն էլ նայել հիմնական իմաստի փոխաբերությունները կամ առումներն են: Նույն արմատից ծագում է նաև նայել բառը, որ կազմված է, ըստ այդմ, հայել բառից՝ նի մասնիկով: Նի հայել > նհայել > նայել¹¹ և սկզբնապես նշանակել է «դեպի ցած նայել», ինչպես որ հայել նշանակել է «դեպի վեր նայել»¹²:

⁷ Մանրամասն տե՛ս սույն հոդվածի «Նի մասնիկի իմաստային առումները» վերնագրի տակ:

⁸ Հմմտ. Հ. Աճառյան, Արմատական բառարան, հատ. Ե, էջ 126—129:

⁹ Այս նի-ն չպետք է շփոթել բարբառներում հանդիպող նույնանուն մի բանի նր-երի հետ, որոնք բոլորովին այլ ճանապարհով են առաջացել և ծագում են տարբեր նպատակների: Օրինակ. նրթասնել||նի, ինձի կսես նախադասության մեջ գործածված է որպես ստորադասական շղկապ, զլինի, ոսկորնի ձևերում՝ հոգնակերտ, սի ըմ ասում||ոսէս արտահայտության մեջ՝ եղանակավորող բառ և այլն:

¹⁰ Նրէստալ, նրէստալ բառաձևերը մասնակցում են նաև բայակազմությանը՝ բաղադրելով մի շարք հարադրական բայեր, ինչպես օրինակ՝ նրէստալ տալ «կպցնել, միացնել, փակցնել», նրէստալ կենալ «կպչել», նրէստալ ինիլ «զբաղվել», նրէստալ տեռալ «շրջապատել», նրէստալ տալ «փաթաթել, փաթթվել», նրէստալ կացնել «փակցնել», նրէստալ լնգնել և այլն:

¹¹ Ստ. Մալխոյանը նայել կազմված է համարում ճ նախդրից և հայել բառից (տե՛ս «Բացատրական բառարան», նայել բառի տակ):

¹² Տե՛ս է. Աղայան, Ստուգաբանական պրպտումներ (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, № 11, էջ 35:

Եվ իրոք, թե՛ Առձևներ, և թե՛ Հայկազյան բառարանը հայնի բառի առում-ներինց մեկն էլ համարում են «վեր նայել, աչքը վեր վերցնել», վերակնել, ամ-բառնալ զաչս»:

Անցողակի նկատմամբ, որ մեր մի քանի բարբառներ հայել, ճայել բառերը նույնությամբ, անփոփոխ ձևով չեն պահպանել. դրանց փոխարեն գործ են ածում աչքել, աճկել, աշկել, իշկել, յէշել, յէշիլ և այլն, բոլորն էլ աչ/ք/ արմատական ձևից՝ բարբառներին հատուկ հնչյունափոխական օրենքներով: Շատ դործածական են, սակայն, հա արմատից ձևացած հայելի, հիլի, հայացք, ճայ-վածք՝ այլև հայնալ¹³, հայել-մայել||հիլիմայիլ (< հայել-նայել ձևից)՝ դմայ-լելի, դմայլիլ, հայել-մայել||հիլիմայիլ դառնալ||տըէոնալ՝ դմայլվել և նման-ները, իսկ Եվդոկիայի և Տրապիզոնի բարբառներում հայել և հայել բառերը գործածված են հենց իրենց բուն նշանակությամբ հետևյալ արտահայտության մեջ. «Մէյմը վեր հայողեն վախցիր, մէյմը վար նայողեն»¹⁴, Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ ժողովրդական առածը վեր նայելու համար գործածել է հայել բառը, իսկ վար նայելու համար՝ հայելը, քանի որ, ինչպես ասվեց վերը, քննական ուսումնասիրությամբ պարզված է, որ հայել սկզբնապես նշանակել է վեր նայել, իսկ հայել՝ ղեպի ցած նայել:

Եթե վերը տրված բացատրությունը ճիշտ է, ապա նի մասնիկի գոյության փաստը գնում է դարերի խորքը, սակայն, բոլոր երևույթին, այդ մասնիկը նա-խապես սահմանափակված է եղել մեկ-երկու բառի մեջ և միայն շատ ավելի ուշ, միջին դարերում է, որ զգացվել է նրա ընդհանրացման ու տարածման անհրա-ժեշտությունը՝ կապված նոր բառեր կազմելու կամ նոր նշանակություններ ու իմաստներ արտահայտելու պահանջի հետ, այն էլ ոչ բոլոր վայրերում և բո-լոր բարբառներում միատեսակ արտադրողականությամբ:

Մեզ թվում է՝ զրաբարից ավանդված նիտքել և նիտալ հաղվազյուտ բա-ռերի մեջ ևս ունենք նի մասնիկի հարադրություն՝ խոքել և տալ բայերի հետ: Նիտքել ստացվել է նիտքել (> ներս խոթել) ձևից և նշանակում է խոթել. խցկել, հրել: Նիտալ Արմատական բառարանը բացատրում է «տկուկուց հեալ», իսկ Առձևներ-ը՝ «եռալ, վառվել»¹⁵: Սակայն Ստ. Մալխասյանի բառարանում բերված օրինակում, զոնե, մեր կարծիքով, նիտալ այդպիսի իմաստ չունի: «Յորժամ կարի զխորտկօքն գայցեմք՝ իբրև տիկ ուռուցեալ նիտայցէ որովայ-նը»¹⁶: Ինչպես նկատելի է բերված օրինակից, տկուկ իմաստն արդեն տրված է «Իբրև տիկ ուռուցեալ» բառակապակցությամբ, որ նշանակում է ուռած տկի

¹³ Շատ կարևոր է նշել, որ հայել պարզ բայը Մոսկվայի եկեղեցական դպրոցում հարձել է սոսկ-ածանցավոր՝ հայնալ, որի անց. կատարյալն է՝ հայցալ:

¹⁴ Օրինակը բերում ենք Ա. Ղանալանյանի «Հայկական առածանից», էջ 72:

¹⁵ Գ. Զահուկյանը, ինչպես երևում է, չի ընդունում Առձևների բացատրությունը, այդ պատ-ճառով էլ, համեմատաբար, իր գրքի համանուն արմատների ցանկում դրել է Արմատականի բա-ցատրությունը՝ 1. նիտալ «չարիք նյութել», 2. նիտալ «տկուկուց հեալ» (տե՛ս «Հին հայերենի հոլովման սխեմա» և նրա ծագումը», Երևան, 1959, էջ 353):

¹⁶ Տե՛ս Ստ. Մալխասյանի, Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, էջ 463: Մեզ թվում է, Մալխասյանի այդ նախադասությունն օրինակել է Աճառյանի Արմատական բա-ռարանից, բայց ոչ լրիվ: Աճառյանը նիտալ դրել է Արմատական բառարանում որպես նորա-գյուտ բառ, որ մեկ անգամ գործածված է Ոսկ. ա. տիմ. 114-ում: Ահա այդ նախադասու-թյունն իր լրիվ տեսքով. «Յորժամ կարի զխորտկօքն գայցեմք՝ իբրև տիկ ուռուցեալ նիտայցէ,

նման, կամ ինչպես ուռած տիկ: Այսպիսով նիտայցէ-ն չի կապվում ոչ տկոն-լուց հնալու և ոչ էլ «եռալ, վառվել»-ու հետ: Իմանք հավանական են համարում Առձեռնի մեկնությունը, տառացի հասկանալով այնպես, թե երբ շատ մոտենում ենք խորտիկներին կամ դալիս հավաքվում ենք խորտիկների շուրջը, նրանց (այսինքն՝ խորտիկների) հոտից մարդու որովայնը զրզուվում ու կարծես եռում, վառվում է: Այս բոլորը, իհարկե, ենթադրություններ են, մեզ ավելի հավանական է թվում, որ բերված նախադասության մեջ նիտայցէ (<նիտալ ձեից) կազմված է նի մասնիկից և տալ բայի առաջին ապառնիից ու բառացի նշանակում է (դեպի) ցած, (դեպի) ներս տալ, իսկ փոխաբերաբար՝ ուտել. մասնավորապես որ Հայկազյան բառարանն էլ նիտալ բառի համար տալիս է «իբր նետել, այսինքն ձգել կամ նիթել» բացատրությունը, որ միանգամայն հարմար է դալիս մեր մեկնությանը: Այսօր էլ մեր շատ բարբառներում ու խոսվածքներում նիտալ փոխաբերաբար նշանակում է ուտել, ագահաբար ուտել. այդ հաստատվում է նաև Հրաչյա Աճառյանի և Ստեփանոս Մալխասյանի բառարաններում բերված «լալ ևս նիտալիս» արտահայտությամբ, որ նշանակում է՝ շատ ևս ուտում, շատակեր ևս:

Այժմ դառնանք այն հարցին, թե դոյականների հետ գործածվող նի-ն (որպես ետադրություն) ինչպես կամ ինչ ճանապարհով կարող է ձևացած լինել: Հայտնի է, որ Ղարաբաղի և Հադրութի բարբառներում, ինչպես և այլուր շատ գործածական են իյէր (<ի վեր), ի վէր (<ի վար) կապերը՝ որպես ետադրություն: Հիշյալ բարբառներում այդ կապերի հետ դրվող բառը միշտ արտահայտվում է որոշյալ հայցականով, ի տարբերություն այլ բարբառների և ժամանակակից զրական հայերենի, ուր կապվող բառը, եթե ժամանակի հարաբերություն է դրսևորում, կարող է դրվել նաև բացառական հոլովով: Ղարաբաղի և Հադրութի բարբառներում նշված կապերը հաճախադեպ են հետևյալ կառույցներում. Կ'ըսը նի յեր ք'իլի տըէս ճուրը խէյա պիրակկել «Գետն ի վեր գնա տես՝ ջուրն ինչու է բարակել»: Արխը նի յեր կամ րիլընիյէր պիցրաց, տըէս հու կա ընդըէղ «առուն ի վեր բարձրացիր, տես ով կա այնտեղ»: Կ'ըսը նիվէր կ'ըկաւ, կըհըսնիս տի'հանակը, «Գետնիվայր կգաս, կհասնես ջրբաժան տեղը»: Այսպես նաև արտը նիյէր, Հօոսար նիյէր, ծօրը նիյէր, մըղակը նիյէր, իրէսը նիյէր, պատը նիյէր, լէնջը նիյէր. նմանապես՝ ծօրը նիվէր, Հօոսար նիվէր, լէնջը նիվէր և այլն, կամ շեշտի տեղափոխությամբ՝ րուրնիյէր, ծհուր նի յեր, պրտը նի յեր, լինջը նի յեր և այլն:

Կասկած լինել չի կարող, որ վերոբերյալ ձևերում, օրինակ, կ'ըսընիյէր, կ'ըսընիվէր նախապես եղել են կ'իւրըն ի յեր (<գետն ի վեր), կ'իւրըն ի վեր (<գետն ի վար). այնուհետև մի կողմից արտասանական դյուրության համար, մյուս կողմից՝ արագաբանության շնորհիվ ի յեր (<ի վեր) կապի ի նախդիրը միացել է կէտըն որոշյալ հայցականով կապվող բառի ն հոգին և ստացվել են կէտը նիյէր, կէտը նիվէր ձևերը¹⁷, ապա շեշտի տեղափոխության պատճառով շեշտազուրկ վանկի ձայնավորը հնչյունափոխվել է՝ կախված բառակազ-

որովայնն, գայոիցի, թառանչիցէ, տապնապիցէ» (տե՛ս Արմատական բառարան, նիտալ բառի տակ):

¹⁷ Հմմտ. Արամը նասաց (<Արամն ասաց-ից), Գրիգորը նուտում է (<Գրիգորն ուտում է) և այլն:

մում եղած ծանր ու թեթև ձայնավորներից. այնուհետև ձայնավորների ներդաշնակության օրենքով ի նախդիրը ազդվելով իրեն նախորդող ձայնավորներից՝ արտասանվել է ը կամ ը', ինչպես՝ կ'ըսը, ճըյէր, կ'ըսընըվէր, ծուրը ճըյէր, ծուրը ճըվէր և այլն:

Նշված ձևերում ի նախդիրը միանում է միայն ն հոգի հետ: Երբ յէր, վէր կապերը գործածվում են առանց ի նախդրի¹⁸, այդ դեպքում կապվող բառը ն հոգ չի ընդունում, և բառերն արտասանվում են կ'ըսը յէր, «գետը վեր», կ'ըսը վէր, «գետը վար» կամ շեշտի փոփոխությամբ՝ կ'ըսը յէր, կ'ըսը վէր, մանավանդ՝ կըլիւրյէր «գլուխը դեպի վեր», կըլիւրվէր «գլուխը դեպի վար» և այլն:

Հենց որ անհրաժեշտություն է ղգացվում կապվող բառի հետ գործածել ի յէր (<ի վեր) կապը, կապի խնդրի ը-ն փոխարինվում է ն-ով, քանի որ կ'ըսը ի յէր, կ'ըսը ի վէր ձևերը դժվարարտասանելի են: Ի յէր (<ի վեր) կապի և կապվող բառի հաճախագեղ զործածությունից շատ անգամ յէր բաղադրիչը հապավվում է, չի արտասանվում, որի հետևանքով ի յէր կապից մնում է միայն ի-ն, որ կապվող բառի ն հոգի հետ հարակցվում է որոշյալ հայցականով կապի խնդրին, ինչպես կէտընի, Հօոստընի, ծօրընի, իրէսընի:

Նման դեպքերում բառերն ստանում են երկուական շեշտ, ըստ որում միշտ երկրորդն ավելի ուժեղ է առաջինից:

Գոյականներին հարակցվող նի-ն որոշյալ հայցականով կապի խնդրի հետ ցույց է տալիս կապվող բառի տարածական հարաբերությունը, միաժամանակ նշելով նաև գործողության ուղղությունը կամ ուղղվածությունը: Նկատելի է, որ շարժում ցույց տվող բայերի մոտ նի-ն կապվող բառի հետ զրսևորում է գործիական հոլովի իմաստ, իսկ ասացական բայերի մոտ՝ ստանում է տրականի նշանակություն. այսպես՝ կէտընի ք'իւնի «գետնի վեր, գետի ուղղությամբ գնա»։ Արիւրնի տուս յէք «առվի ափով, միջով դուրս արի»։ Մըղակընի վրէնը կէնալ «գոռան առջև, գոռան ընդհուպ կանգնել»։ Իրէսընի խոսել «երեսին խոսել», ճըղէնի պրտըհէցէ «ճանապարհին հանդիպեցի» և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ— Բաղաձայնահանգ բառերում նի-ին նախորդում է ը, իսկ ձայնավորահանգ բառերում՝ ն. ինչպես՝ իրէսը-նի, բայց՝ հըղէննի:

Հարցի լուսաբանման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև հետևյալի վրա: Հայտնի է, որ ժամանակակից հայերենում ի վեր, ի վար կապերը նույնպես դրվում են որոշյալ հայցականով խնդրի հետ և տեղի, տարածական հարաբերության հետ միասին արտահայտում են նաև ուղղության իմաստ՝ որոշ յուրահատկությամբ¹⁹, ինչպես՝ գետնի ի վեր երթալ²⁰ (գետնի վար), ձորն ի վեր (ի վար), լեռն ի վեր (ի վար) և այլն: Սակայն ի վեր կապը դրվում է նաև ժամանակ ցույց տվող բառերի հայցական և բացառական հոլովների հետ՝ «արտահայտելով անորոշ այնպիսի ժամանակ, որ սկսվում է ժամանակ ցույց տվող բառերի զրսևորման ժամանակի սկզբից և շարունակ-

¹⁸ Ի նախդրի հոլովառական ու կիրառական նշանակության մասին մանրամասն տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1964, էջ 257—262:

¹⁹ Մանրամասն տե՛ս Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1953, էջ 230—231: Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շփեղծող խոսքի մասերը, Երևան, 1959, էջ 89, նույնի՝ «Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու բերականական հատկանիշների փոխհարաբերությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 308—309:

²⁰ Տե՛ս Մ. Աբրահամյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 475:

վում մինչև դրանց վերջը»²¹, ինչպես՝ «Ուր հարյուրավոր տարիներ ի վեր բուրդը պապերիս ոսկորներն են դիզված», «Այն ժամանակից ի վեր մենք ալլևս չտեսնվեցինք»²² և այլն:

Հետաքրքրական և ուշագրավ է այն հանգամանքը, որ մեր մի շարք բարբառներում ի վեր կապը ժամանակային հարաբերությունն արտահայտելու դեպքում ևս երբեք բացառական հոլովով կապի խնդիր չի ընդունում²³։ այդ առանձնահատկությունն ունեն նաև Ղարաբաղի և Հաղրութի բարբառները: Այդ բարբառներում ի վեր > ի վեր > նի վեր կապը դրվում է որոշյալ և անորոշ հայցականով խնդրի հետ և ցույց է տալիս մի ժամանակամիջոց կամ ժամանակահատված, որի ընթացքում կատարվում, կատարվել կամ կատարվելու է գործողությունը: Ահա համապատասխան օրինակները. Զուռնան մըէծ պասը նի վեր պատան կախ մնալան յէտը սօր դաբան հանըմընք, ծվվանը յրա անըմ», «Մալլալի, թա մին մըէծ աման տօն կըտանիմ, մէր տընըցէն մըէծ պասը նի վեր շօրվա կիփի, խօխեք'ը կօտին»²⁴:

Ասացինք, որ նի վեր կապը դրվում է նաև անորոշ հայցականով խնդրի հետ: Նի վեր (< ի վեր) կապի հետ կապվող բառը անորոշ հայցականով է դրվում այն դեպքում, երբ կապվող բառը թվական լրացում է ստանում, ինչպես օրինակ՝ «Իմ ապէր մին վիրինի խօզ ա պէրալ, մի ամէս նի վեր կէրալ լը/ն/ք «Պապս մի վայրի խոզ է բերել, մի ամիս ի վեր կերել ենք»։ Մեր Աքալը էնչաք փուլ օնէ, վէր հարուր տարէ նի վեր ծախսէ՝ պըրծընէլ չի «Մեր Առաքելը այնքան փող ունի, որ հարյուր տարի ի վեր եթե ծախսի՝ չի վերջանա»։ Մի ամէս նի վեր, հարուր տարէ նի վեր նշանակում են՝ ամբողջ ամսվա ընթացքում, հարյուր տարվա ընթացքում:

Բերված օրինակներում ևս նի վեր կապի վեր բաղադրիչը հաճախ հապավվում է և ստացվում են դրանց սուղ ձևերը՝ պաֆընի, ամէսընի, շէքաքընի, տաբէննի և այլն:

Այսպես՝ Տարէննի կօտին, կըխըմին, ալլա կասին, վէլ կէրալ լը/ն/ք, վէլ խըմալ «Ամբողջ տարին (կամ տարվա ընթացքում) կուտեն կիսմեն, դարձյալ կասեն՝ ոչ կերել ենք, ոչ խմել»:

Մի քանի բարբառներում (օրինակ՝ Ղարաբաղի, Հաղրութի և այլն) նի ետադրությունն ունի կիրառական մի այլ առանձնահատկություն ևս. այն հետ կապով դրվելով գոյականների և տարբեր գերանունների²⁵ սեռական-տրական

21 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 230—231:

22 Օրինակները բերել ենք Վ. Առաքելյանի և Ս. Աբրահամյանի նշված գրքերից:

23 Նման դեպքերում բացառական հոլովով կապվող բառի հետ դրվում են դես, դեն, տէս, տէն (< ընդ այս. ընդ այն ձևերից) բառերը, ինչպես օրինակ՝ էն օրանը տէսը իրէսը տըէսալ չըմ, «Այն օրից ի վեր երեսը չեմ տեսել»։ էն կըսվէլանը տէնը ուրուր նի հէտ խօսըմ||խոսէս չըն «Այն կուկուց հետո իրար հետ չեն խոսում» և այլն:

24 Օրինակները բերում ենք Մ. Շահնազարյանցի «Զուռնա-տմբլա» գրքից, Վաղարշապատ, 1908, էջ 182, 105: Մեր կողմից կատարված միակ փոփոխությունն այն է, որ բնագիրը ենթարկել ենք գիտական տառադարձության: Նկատենք, որ Ղարաբաղի բարբառում պաս բառը արտասանվում է պաւ՝ ձևով, իսկ պասը գրական է:

25 Անձնական գերանուններից՝ ինձ, քէզ, նրա (ընդրա, մըէզ, ծըէզ), նրանց (ընդրանց), ուրան, ուրանց (Հիրենց), ցուցականներից՝ ըստրա, ըտրա, ընդրա, ըստինին, ըտինին, ինդինին և այլն, փոխադարձ գերանուններից՝ ուրուր (Հիրար), մուսմուսու (մեկմեկու), որոշյալնե-

հոլովածների հետ՝ ցույց է տալիս փոխադարձ գործողությանը կամ վիճակով պայմանավորված առարկայի (կամ անձի) սերտ միասնության հարաբերություն²⁶։ Երբեք, փաստելով, Քարեն նի հետ կոխել շրն կենալ «Քարի հետ կոխ չեն բռնի»։ Շանը նի հետ էլ հրնգրրոթուն կանէ «Շան հետ էլ ընկերություն կանի»։ Տու հի՞նչ կօրծ օնիս Ըրամէննի հետ «Դու ի՞նչ գործ ունես Արամի հետ»։ Ինձ նի հետ լավ կաց «Ինձ հետ լավ եղիր»։ Մըէզնի հետ կօրծ շօնիս «Ձեզ հետ գործ չունեմ»։ Ըստիհին նի հետ խոսելի չի «Այսպիսինի հետ խոսելու չէ, չարժե խոսել»։ ուրսուր նի հետ հարրայրն մըտալ²⁷ «Իրար հետ վիճում են, վիճաբանում են»։ Մէր Սօփանը լուխիին (կամ լուխչու) նի հետ էլ լավ ա, «Մեր Սոֆյան բուրի հետ էլ լավ է»։ ուրսուր նի հետ խօսիս վէչ «Ուրիշի հետ չխոսես»։ Շուր նի հետ ըս կրորէվ անըմլլըննէս «Ո՞ր հետ ես կովում»²⁸ և այլն։

Նի ԲԱՍՆԻԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՅԵՐԻ ՀԵՏ

Նի մասնիկն ունակ է կապակցվելու ամեն տեսակ, բայց ոչ բոլոր բայերի հետ։ Երբ մեծ մասամբ հարադրվում է շարժում ցույց տվող ինչպես պարզ կանոնավոր, այնպես էլ պարականոն և ածանցավոր²⁹ բայերի հետ, նմանապես՝ ինչպես ներգործական ու չեզոք բայերի, այնպես էլ կրավորական և կրավորաձև չեզոքների հետ։ Երբեք՝

1. Կանոնավոր պարզ բայերից՝ նի թակել «թակել», նի բռնել «բռնել», նի իրծել «իրծել», նի ծրծել «ծրծել», նի ծրծել «ծրծել», նի կապել «կապել», նի կրտրել «կտրել», նի հանել «հանել», նի հավաքել «հավաքել», նի հարել «հարել», նի մնալ «մնալ», նի շարել «շարել», նի պրահել «պահել» և այլն։

2. Պարականոն բայերից՝ նի տալ «տալ», նի գալ «գալ», նի օնել «օնել»։

Ինչ՝ լուխիին կամ լուխչու (<ողջի), ամգ'ու (ամենքի), ամէն միսին և այլն, անորոշներից՝ ուրուշու կամ ուրիշին (<ուրիշի), էսհինչին, էնհինչին և այլն, հարցական-հարաբերականներից՝ հուր (<ոյր, ուր), քանինին (քանի), վէրին (<որի) և այլն։

26 Հետ (հետ) կապի հետի հետևի տարբերակը գոյականների և վերը նշված դերանունների սեռական-տրական հոլովածների հետ ցույց է տալիս նպատակի կամ հանգաման հարաբերություն, ինչպես՝ ինձէտէ (<ինձ հետի=ինձի համար), քըզէտէ (<քեզ հետի=քեզ համար), հունչու հէտէ (ինչու հետի=ինչու համար), շան հէտէ (<շան հետի=շան համար), կ'ուլու հէտէ (<զայի հետի=զայի համար) և այլն։ Այսպես՝ ոճով ասվում է. «Ինձէտէ էն ղօլը տէսը չիրալ», «Քըզէտէ սըլտըր ք'ընամ (քիս ա, և այլն)»։

Ժամանակակից հայերենում բարբառային հետի կապի իմաստն արտահայտվում է համար կապով (օրինակ՝ ինձ համար), իսկ հետի ձևը կիրառվում է իրրև որոշիչ. ինչպես՝ «Հետի ընկերը մի շատ կիրթ երիտասարդ էր», «Հետիս մարդը բարեկամս էր», «Հետիդ երեխան ո՞վ էր»։ Հետիս մարդը նշանակում է՝ այն մարդը, որ ինձ հետ էր, հետիդ երեխան՝ որ քեզ հետ էր, հետի ընկերը՝ որ նրա հետ էր։ Երբեք ղեմքը հոգ չի ընդունում։

27 Միայն այս կարգի հարադրական բայերում է, որ մտնել բայը գործածվում է առանց նի մասնիկի (օրինակ՝ հարբա մըտնէլ, այժմ մտնել զարանակալել և այլն)։ Դա բացատրվում է նրանով, որ նման կապակցություններում մտնել բաղադրիչը չի պահանջում իր բուն նշանակությունը, այսինքն՝ նման ձևերում մտնել-ը, մուտք գործել չի նշանակում։

28 Ղարաբաղի և Հաղարաթի բարբառներում հետ նտադրությունն առանց նի մասնիկի չի գործածվում։ չի ասվում ինձ հետ, քեզ հետ, բարի հետ, զայի հետ և այլն, այլ միայն՝ ինձ նի հետ, քեզ նի հետ, բարեն նի հետ, կ'ուլին նի հետ և այլն։

29 Նկատի ունենք թե՛ բաղադրական, և թե՛ կերպածանցավոր բայերը։

3. Սոսկածանցավոր բայերից՝ նի ընգնել *«ընկնել, անկանել»*, նի ընցրել *«անցանել»*, նի անել *«առնել, անել»*, նի տըննալ *«տըննալ «դառնալ»*, նի դնել *«տնել «դնել»*, նի ելնել *«ելնել»*, նի մըտնել *«մտնել»*, նի պըրծընել *«պրծնել»*։

4. Ներգործական սեռի բայերից՝ նի ածել *«ածել»*, նի անել *«առնել, անել»*, նի պիրել *«բերել»*, նի փիրթիլ *«բրդել»*, նի փիցիլ *«զցել < ձգել»*, նի տինել *«դրնել»*, նի թակել *«թակել»*, նի լցնել *«լցնել»*, նի խառնել *«խառնել»*, նի կապել *«կապել»*, նի կոխել *«կոխել»*, նի կըտօրել *«կոտորել»*, նի կուտուրառել *«կոտորառել»*, նի հանել *«հանել»*, նի հավաքել *«հավաքել»*, *«հավաքել»*, նի շարել *«շարել»*, նի պըրծընել *«պրծնել»*³⁰, նի փըշրել *«փշրել»*, նի շըռել *«շռել»*, նի ֆաղել *«բաղել»*, նի ֆաշիլ *«բաշել»*։

5. Չեզոք սեռի բայերից՝ նի ընկնել *«ընկնել, անկանել»*, նի ընցրել *«անցանել»*, նի դառնալ *«դառնալ»*, նի ելնել *«ելնել»*, նի լինել *«լինել»*, նի լիքնել *«լիքնել»*, նի թողել *«թողել»*, նի գալ *«գալ»*, նի կենալ *«կենալ»*, նի հըրսնել *«հասնել»*, նի մնալ *«մնալ»*, նի մըտնել *«մտնել»*, նի հառաքել *«հառաքել»*, *«հառաքել»*։

6. Կրավորական և կրավորաձև չեզոքներից՝ նի անվել *«արվել»*, նի պիրվիլ *«բերվել»*, նի փիրթվիլ *«բրդվել»*, նի թակվել *«թակվել»*, նի խառնվել *«խառնվել»*, նի կապվել *«կապվել»*, նի կոխվել *«կոխվել»*, նի կըտօրվել *«կոտորվել»*, նի կուտուրառվել *«կոտորառվել»*, նի շարվել *«շարվել»*, նի փըշրվել *«փշրվել»*, նի ֆաշիլ *«բաշվել»* և այլն։

7. Պատճառական բայերից՝ նի կացնել *«կացնել»*, նի հըսցնել *«հասցնել»*, նի խըծկըցնել — , նի ծըծըցնել *«ծծեցնել»*, նի կըտըցնել *«կտրեցնել»*, նի պըրծըցնել *«պրծացնել»*։

8. Բազմապատկական բայերից՝ նի կուտրառել *«կոտորառել»*, նի պըտրօրել *«պրորթել»*, նի խըծկօտել *«—»*, նի պըրընօտել *«պարանել»*՝ ծեծել ձևից, նի նիմիրքօտել *«նմիրքօտել»*։

9. Նի մասնիկը կապակցվում է հարադրական այն բայերի հետ, որոնց հարադիր բաղադրիչն են հետ, վեր, վար կապերը, ինչպես օրինակ՝ նի հետ անել *«հետ անել»*, նի հետ բերել *«հետ բերել»*, նի հետ դառնալ *«դառնալ»*, նի հետ լինել *«հետ լինել»*, նի հետ գալ *«հետ գալ»*, նի հետ տալ *«հետ տալ»*, նի հետ կենալ *«հետ կենալ»*, նի վեր ածել *«ներածել»*, նի վեր տալ *«ներքե տալ»*, նի յեր տալ *«վերե տալ»*, նի յեր ածել *«վերածել»* և այլն։

10. Նի-ն կապակցվում է նաև տալ բայով կազմված պատճառական բայերի հետ. ինչպես օրինակ՝ նի անել տալ *«ներս անել տալ»*, նի պըրանել տալ *«ծեծել տալ»*, նի շարել տալ *«շարել տալ»*, նի փըշրել տալ *«ներբրդել տալ»*, նի փիցիլ տալ *«ներս գցել տալ»*, նի ծըծել տալ և նի ծըծըցնել տալ *«ներծծել տալ»*, նի ածել տալ *«լցնել տալ»*։ այսպես նաև վերը բերված հարադրական բայերից՝ նի հետ անել տալ *«ծածկել տալ»*, նի հետ պիրիլ տալ, նի վեր ածել տալ, նի վեր տալ, նի յեր ածել տալ և այլն։

30 Այս բայն ունի նաև չեզոք սեռի կիրառություն. օրինակ՝ մաննս պրծալա (մաստս արյունոտվել էր), բիթը > քիթը պրծալա (բիթը արյունոտվել էր)։

11. Նի մասնիկն առանձին դեպքերում կարող է սեռային փոփոխություն առաջացնել՝ ներգործական բայերը վերածելով շեղոք սեռի, կամ էլ միևնույն բառույթի սահմաններում դրսևորել կրկնասեռության երևույթ: Այսպես՝ դնել բայը ներգործական սեռի է թե՛ գրական հայերենում, և թե՛ բարբառներում, սակայն այն հարադրվելով նի մասնիկի հետ՝ նի դնել > նի տիճիլ ձևով դրսև. վորում է շեղոքի իմաստ, ինչպես՝ թօռը նիյա տիրալ «անձրեն սկսվել է», թօռը նի տիրալ «անձրեն սկսվեց». պրծնել նույնպես ներգործական սեռի բայ է, բայց նի պրծընել՝ շեղոք. օրինակ՝ մուկընը մօկընը նի պրծալ ծակը մուկը մտալ անցքը: Այսպես նաև ծծել բայից՝ նի ծըծել, ծռել՝ նի ծըռել, կտրել՝ նի կրտրել. կոտրատել՝ նի կուտրաուել և այլն³¹:

ՆԻ ՄԱՍՆԻԿՈՎ ԲԱՅԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ

Մեր ձեռքի տակ եղած նյութերի ուսումնասիրությունը մեզ բերել է այն հետևություն, որ նի մասնիկը տարածվել ու ընդհանրացվել է հիմնականում արևելահայ բարբառներում³². այն հատկանշվում է թե՛ բառակազմական նշանակությամբ, և թե՛ իմաստային տարաբնույթ կիրառությունների դերով. մինչդեռ արևմտահայ բարբառներում³³, ընդհանրապես, չի տարածվել, ուստի նրա գործածության ոլորտը մասնակի կիրառությամբ տեղայնացվել է միայն մի քանի բառերի սահմաններում:

Արևելահայ բարբառներում նի մասնիկի բնորոշ և տարածված կիրառություններից մեկն այն է, որ իրենով բարդված ձևերում հարադրվող բայի իմաստին ու բնույթին համապատասխան ցույց է տալիս գործողության ուղղությունը կամ ուղղվածությունը մեկ դեպի վար կամ դեպի ներս, մեկ դեպի վեր կամ դեպի դուրս: Ահա համապատասխան օրինակները՝ դեպի ներս նշանակությամբ. Արարատյան բարբառից՝ Դուռը բաց արեց ու նի մտալ (Պռոշ. 1, 85): Ղարաբաղի բարբառից՝ Մհենդ'անսէս ամէն մի՛նր հաքին նիաֆաշալ՝ իւրան պիւնը մտալ (Զուռնա-տմբլա, 175), Պովրը ըլբըստրակու նման խըլըշած նիա սընըրմ իւրան խնամուն իրէսը տըէսըմ (նույն տեղում, բ. 54), կալ ես նի տալի (Աճառյան Գալառ. բառ. 813): Մեղրու բարբառից՝ Մէլքումա ուրէն քարուն քըմակաց գուլլա-գուլլա վէրա թրփէլէն Արասիւր նէ մրտօղէն վէրա (Մեղրու բարբառ, էջ 379). Զուրէն բէռնը վէրան նէ մըտէս գէտը (ն.տ., էջ 393):

Հաղորդի բարբառից՝ Հօլլէրը նի յընըրալ կ'ումը (Հաղր. բարբ., 301): Դեպի վեր, վեր բարձրանալ նշանակությամբ. Արարատյան բարբառից՝ Ուտղ դիր զանկուն ու նիլ վրես (Հայ ժող. հեք., 3, 27), Գելը սովածությունից չի կարում դարը նիլնել, ասում են շատ ուտելուցն ա: Այս առածը տարածված է նաև Վղպ., Վն., Պլս., Ալշ., Զգզ. (տե՛ս Հայկական առածանի, էջ 12): Նի են ընում ժամի կտուրը (Պռոշ., 1, 192), էնտեղից գնում են Կաթուղիկեի գլուխը նիլնում (ն. տ., էջ 192), Ուղտը նիլէ կուզեկուզա ման դալիս (էմինյան ազգ. ժող., 2, 210, 215), Զին բերեցին, որ նիլնէին (Հայ ժող. հեք., 3, 33), էտ ախալիկը կնիլեւ կտուրը անկաջ կաներ (ն. տ., էջ 80): Ես իմ կարմիր ձին կնիլնեմ

³¹ Կտրել, ծռել, ծծել և նման այլ բայեր անփոփոխ ձևով ունեն և՛ ներգործականի, և՛ շեղոքի իմաստ:

³² Նկատի է առնվում ում և ս ճյուղի բարբառները:

³³ Նկատի ունենք կը, կա, հա ճյուղի բարբառները:

(ն. տ., էջ 51), Չոպանը իրա աղի ձիու թարթը նիլավ (ն. տ., էջ 82, 84, 89), Գնացին մի սարի գլուխ նիլան (ն. տ., էջ 84, 132), էտ ձիանը ես ու Գյուլը կնիլնեմ. մարդ իրավունք չունեք նիլնելու (ն. տ., էջ 91): Արձանագրությունս այս հիւսիսային պատի վրա նի՛նանողը եղել է Կոմիտաս կաթողիկոսը (Արարտ., 1890, 734):

Ղարաբաղի բարբառից՝ նի իլ ծառը³⁴ «բարձրացիր ծառը» (Աբ., 230). նա ծին նի իլած քի՛նից «նա ձին բարձրացած (նստած) գնաց» (ն. տ.), նի ռմրնու՛մ տիգին կըլխէն քօն ինիմ «բարձրանում եմ դեզի գլխին քնում» (ն. տ.): Հաղրութի բարբառից՝ Հինչրս օսէրըտ նի ֆիշիս «ինչու ես ուսերդ վեր բարձրացնում», Յէս ընդրանա պէն հըրցըրի, իզէն օսէրը նի ֆաշից «ես նրանից բան հարցրի, իսկ նա ուսերը վեր բարձրացրեց (Հաղր. բարբ., 303):

Նի մասնիկի ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հարադրվող բայի բաղում նշանակությունները կամ առումները սահմանափակում, նեղացնում, մասնավորում է՝ նրանից թողնելով մեկ-երկուսը. սովորաբար պահում է հիմնական նշանակությունը, բայց երբեմն էլ հիմնական նշանակությունը կամ իմաստը ետին պլան է մղվում, կամ բոլորովին մոռացվում, իսկ երկրորդական նշանակությունը դառնում է հիմնականն ու միակը: Այսպես՝ ածել (<ածել) բայը, որ ըստ Ստ. Մալխասյանի բացատրական բառարանի ունի 16 նշանակություն կամ առում, նի ածել ձևով նշանակում է միայն լցնել, ներածել. օրինակ՝ գինին՝ կ'ինին նի ածիլ՝ ածէ գավաթը՝ 35 «Ուլե՛րը ներս արա գոմը», հընդճը էնչաք նի ըրալ՝ մըէռալ «հեղճը այնքան հոգեկան ապրումները ներսում պահեց, որ մեռավ»:

Այժմ քննենք նի մասնիկավոր բառերի նշանակություններն առանձին-առանձին՝ ըստ մեր կողմից նախապես կազմված ցուցակի:

Նի աճել (<առնել բայից). ներս անել. հօլլէրը նի ըրա կ'ումը՝ 35 «Ուլերը ներս արա գոմը», հընդճը էնչաք նի ըրալ՝ մըէռալ «հեղճը այնքան հոգեկան ապրումները ներսում պահեց, որ մեռավ»:

Նի աճցնել/ընցնել (<անցանել-ից). անցնել բայի շուրջ նրկու տասնյակ առումներից նի աճցնել/ընցնել ձևով պահպանվել է մի հին, մոռացված նշանակություն միայն, այն է՝ «գուգավորել» և համապատասխանում է գրաբարյան «անցանել ընդ կին» արտահայտությանը. ինչպես՝ Միքանէնը նի ընցնի՛ն քեզ³⁶, լենպատեհ ու անվայելուչ այս արտահայտությունը, մեր կարծիքով, խոր հնությունը նշմարներից է: Մեղ հայտնի չէ, սակայն, ուրիշ բարբառներ նույնպե՞ս պահել են նշված բառի հիշյալ նշանակությամբ գործածությունը, թե՞ ոչ:

Նի բերել/պիրիլ (<բերել-ից). 1. հսկել, հարվածել, զարկել. Կըտանիմ-

34 Ոմանք կարծում են, թե նի իլավ ձին, նի իլ ծառը և նման ձևերում բայական հարադիրը լինել (<լինիլ) բայն է. մինչդեռ դա թյուրիմացություն է. իրականում նման հարադրություններում գործում է նլնել (<ելանել) բայը, որի հնչյունափոխված տարբերակներն են՝ ըստ գրաբարյան և եղանակային ձևերի՝ նիլնել (անորոշ դերբայական), նի ըլնում, նի ընում (անկ. դերբայ), նի լէ(լ) (վաղակատ. դերբայ), նի ըլավ (անց. կատ.), նիլ (հրամ., եզ. 2-րդ դեմք), նիլնէին (ըղծ. անց. ապ.), նի կլեր կամ՝ կնիլէր (պայմ. անց. ապ.), նիլած>նիլած (հարակ. դերբ.) և այլն:

35 Գործածության վայրերը չնշված օրինակները առել ենք բանավոր խոսքից և վերաբերում են Ղարաբաղի և Հաղրութի բարբառներին:

36 Այս արտահայտությունը սովորաբար գործածում են կանայք՝ իրար հետ վիճելիս, մանավանդ՝ կովելիս:

Արարիւիմ, հանց նի կրպիրիմ. կըք'իւնիս, էլ կ'ալ չըս «կտանեմ-կբերեմ, այն-պես կխփեմ, որ կգնաս, էլ չես գա»:

Նի ֆիցիլ (<ձգել'ից). 1. Ներս գցել. Ռուբէն, էջը նի յը՞ս ֆիցալ «Ռուբեն, էջը գցել ես գո՞մը»: 2. Տարածել. Խրվածու վսկըռնէն թափած, վէտած՝ շնավէտը նի ֆիցած մարդու զահլա ա տանըմ (Ջուռնա-տմբլա, էջ 105): 3. Փխր. խըմել. Մէր Կ'ուք'իւն էնչաք նի ա ֆիցալ, վէր վըէռա ընգալ ա «չափազանց շատ է խմել, հարբել է»:

Նի դառնալ||տըէռնալ||տըէռալ (<դառնալ'ից). ներս թափվել, լցվել, մըտնել. Մըլդըթէն նի տըէռնէն շէնը «Ջինվորները մտան գյուղ». Ճուրը նի տըէռալ տօնը «Ճուրը լցվեց տունը»: 2. Ետ դառնալ, վրա պրծնել. Նի դառան հացին Կուշտ կերան (Հայոց բառ ու բան, 502), Աղջիկներն եկան, նի դառան: Ընկան զորքի ետեւից, զորքը նի դառալ ջարդեց (ՀԲԲ, 3, 461):

Նի դնել||տիւնիլ (<դնել'ից). Այս բայի 29 առումներից նի տիւնիլ ձևով մընացել է միայն մեկը, այն է՝ սկսել. Թոռը նի տիւնալ «Անձրեն սկսեց գալ». Վէր նի տիւնալ, դըռոցը, էլ վէրչ չըկա «Որ սկսեց լալ, էլ վերջ չկա»:

Նի ելնել||էլնել||իւնիլ (<ելանել'ից). 1. Վեր բարձրանալ. Գնացին մի սարի գլուխ նիւան (ՀԺՀ, 3, 84, 132), էտ ախշիկը կնիկը կտորը անկաջ կաներ (ն. տ., էջ 80), 2. Հեծնել. Դե ամեն մարդ իրա ձին նիւնի ու էթա իրա տուն (ն. տ., էջ 33):

Նի ընկնել||ընգնել (<անկանել'ից). Մեջ ընկնել, միջամտել. Կոտրած քրթօլու նըման հունչուվըս նի ընգնըմ||ընգնէս «Պոչատ գղալի պես ինչո՞ւ ես մեջ ընկնում», Մօկընը նի յա ընգալ կարասը «Մուկը ընկել է կարասը»:

Նի յակել (<թակել'ից). 1. Վրա ծեծել. Լըվասկը սօրէ տարէ կէտէն նի-քըկըեցէ. պէրէ «Այսօր լվացքը տարա գետում վրա ծեծեցի, բերի»: 2. Փխր. գործածվում է «զուգավորել» նշանակությամբ:

Նի քօղել (<թողուլ). 1. Ներս թողնել. Ինչո՞ւ նրան նի քօղիֆ (ՀԲԲ, 3, 461): 2. Աչքը հառել մի բանի, սպասել մեկին. Աշկըտ նի քօլէ, թա հիբա Կ'ըլական «Սպասիր, թե երբ է գալու» (ՀԲ, 301), Ես կը կարի՞մ վրժըբէդ տեռնամ հուքեպարծուի դիւղիւգավ ման կեամ ու ամեն սհաթ աչքս նի քօլիմ՝ թա էսա ա մհէնգ պաշպորտս ինձ կտան (Ջուռնա-տմբլա, 134):

Նի լիւնիլ||իւնիլ (<լիւնիլ). 1. մտնել. Փօշը նիյալալ վըէննըս «Փուշը մտել է ոտս», Ասըէղը նի իլալ մաննը «Ասեղը մտավ մատը» (ՀԲ, 301). խըէղճ առչ, զաւման նի յա լալ փօրը «դաշույնը մտել էր փորը»: 2. Հասնել. Խմորը շուտով նի կլիւնի³⁷ (ՀԲԲ, 461):

Նի լցնել||լըսնել (<լնուլ'ից). Ներս լցնել. Ամանը էնչաք նիյա լըցրալ, վէր օտվէլ չի նի «Ափսեն այնքան է լցրել, որ հնարավոր չէ ուտել». էնքան նի լըցրու, վէր օտվէ «Այնքան լցրու, որ հնարավոր չի նի ուտել»:

Նի խառնել||խառնել (<խառնել). Լավ խառնել. Ղըղղանը նի խառնէ, տակը փրոկ/ն/է վէչ «Կաթնայի պարունակությունը լավ խառնիր՝ տակը չըռնի»:

³⁷ Լիւնիլ բայը «հասնել» իմաստով չի գործածվում ոչ մի տեղ, ինձ թվում է, «Խմորը շուտով նի կլիւնի» արտահայտության մեջ կլիւնի ձևը լիւնիլ բայից չէ. այստեղ մենք իրականում ունենք Լիւնիլ (<ելանել) բայի պայմանական եղանակի ապառնի ժամանակի եղ. 3-րդ դեմք՝ կլիւնի>կէլնի, ապա ի-ի ներդաշնակությամբ կլիւնի և ևտեառաջությամբ՝ կլիւնի: Խմորի հասնելը ևալված է բարձրանալու՝ Լիւնիլու հետ, իսկ Լիւնիլ, բարձրանալն էլ կախված է թիվ/և/ու-բացառությամբ աստիճանից, մինչդեռ լիւնիլ բայը ոչ ուղղակի իմաստով և ոչ էլ փոխարենարար այդ-պիսի առում ունենալ չի կարող:

Նի խառն/ն/վել. խառնվել, խճճվել. Հանց նիյրն խառվալ, վէր շօնը տարը ճինանչըմ ճինչիս չի «Այնպես են խառնվել, խճճվել, որ շունը տիրոջը չի ճանաչում»:

Նի խըծկել (<խզկել<խցկել). 1. Որեւէ առարկայի կամ իրի ներսի կողմի վրա ծռվելը. Կըլվէզ'ը նի յա խըծկալ «Կաթսան ներսի կողմի վրա ծռվել է»։ Մի նի խըծկած ծիմէրուկ ա պէրալ, գ'իդուս ա թա լճա՝ տի կիւնի «Մի ներս ընկած՝ խոցված ձմերուկ է բերել...»։ Էտ նի խըծկօտած տուրուբան հիշտէղա յը՞ս քիթալ «Այդ մի քանի տեղից դեպի ներս ծռված խողովակը որտեղի՞ց ես գտել»:

Նի ծըէլիէլ (<ծեփելից). 1. Հանդիպել. Կըք'իւնիս ընդրան էլ նի կըծըէլ-վիս կըկ'աս «Կգնաս նրան էլ կհանդիպես, կգաս»։ 2. Ժեծել.

Նի ծըծէլ (<ծծելից). 1. Ներծծել, ներծծվել. Ծո՛ւրը լաքէրը հանց նի յա ծըծալ, վէր էրկու շէրաթ ճիրիս վէշ, վէշը չի «Ջուրը այնպես է ներծծվել մարդերը, որ երկու շարաթ էլ եթե ջրելու չլինես, հոգ չէ»։ Աղը հալա նի չի ծըծալ «Աղը դեռ չի ներծծել մարմինը»:

Նի ծըռէլ (<ծռելից). Դեպի ներս ծռել. Էտ նի ծռած տուրբան հունչու վը՞ս պէրալ «Այդ դեպի ներս ծռված խողովակը ինչո՞ւ ես բերել»:

Նի գալլ կ'ալ (<ղալից). 1. Կաշել, դիպշել. Ասըմըն բըլըբանիտ թխի, ես էլ շիլ ընգնելուք նի կեալուլ մի օր բիրդան թխեցի (Ջուռնա-տմբլա, 75), եւ գիղըմ շը՞ք, վէր էտ աղարը խիլա վախտ ա, վէր նի յա եկալ, մեր սումա-րաններին դախտներին (ն. տ., էջ 132). Ակնէդ խէլթիտ քամի յա նի յեկալ՝ — Քունն ա նի եկալ, վէր տանը թէք ընգուկ՝ ասըմըս տաննըմ իլա՞լ (ն. տ., էջ 31): Սլալըխ դատ ա, վէր նի կ'աս, պարան իրկ'ա՝ «Խաբիսուլ բան է, որ կաշես՝ կփլվի»։ 2. Հանդիպել. Հըղէննի Բագուց Վընէսին էլ նի կըկ'աս «Ծանապարհին կհանդիպես նաև Բաղունց Վանեսին»։ 3. Խփել մի բանի, դարկել. Ծիպոտով մեշքին մի քանի (անգամ) նի եկալ (ՀԲԲ, 3, 461): 4. Խոսքը վիրավորական թվալ. Մի մարթ չի կա, վէր քէֆնէրին նի կեալ՝ տանան տիւս անի (Ջուռնա-տմբլա, 75), Այդ խոսքը ինձ շատ նի եկալ (ՀԲԲ, 3, 461). Տղայ. խէյս րախէն սրտէն նիկաւ, խոխա յա գիտաս չի (ԿՊ, 62). 5. Վիրավորանքից առաջացած հոգեկան ծանր վիճակ. Ջանան նի յեկած կընէգ'ա. «Հոգեպես վիրավորված կիմն է»:

Նի կալլէլ (<կապելից). 1. Փաթաթել, կապել, կապկպել. Խօխան նի կապլէ, թօղ քօն ինի ճերեխային փաթաթիր (օրորոցի մեջ), թող քնի։ 2. Դեն ձըգել, շարտել մի կողմ. Էտ պատքը չի, նի կալլէ կուկուլ. «Այդ պետք չէ, շըպըրտիր վեր»։ 3. Մի բան շրջել, թեքել մի կողմի վրա. Սօրէ ճուրը նի յըմ կապալ կուրօնուն յըրա «Այսօր ջուրը՝ առուն ամբողջովին շրջել, թեքել եմ մարդերի վրա»։ 4. Խփել, հարվածել. Կուպալալը հանց նի յա կապալ կըլխէն, վէր ուրանան քէցուլ ա «Կոպալուլ այնպես է խփել զլխին, որ ուշագնաց է եղել»։ Մըհուկալ նի մէր կապլէլ. տիմացողը շըմ «Փայտով մի խփիր, չեմ կարող դիմանալ» (ԱԲ, 230):

Նի կլէնալ (<կենալից). 1. Վառվել, Կըրակը նի կլէնա³⁸, ջանըտ ընգնէ «Կըրակը վառվի՝ ընկնի մարմինդ»։ 2. Բարկանալ, զայրանալ, բորբոքվել. Էտ

³⁸ Այս իմաստը ծագում է կենալ բայի կաշն նշանակությունից. այսպես՝ «Պատառ կաց, բաճար կ'ա, վըճառ կաց՝ «Մի քիչ կաց՝ սպասիր, նանիս դա, կպիր հետևից»։ կամ՝ Տափան կլենաս պուր չի կ'աս՝ «Գետնին կաշես՝ չպոկվես»:

էրկուհին թրխելին յըրա՝ լափի իստըս նի կացալ «Երկրորդ անգամ խփելու վրա խիստ զայրացա» (բորորքվեցի) (Զուռնա-տմբլա, 2, 4): 3. Նման. տաքանալ, վառվել. հոխան նի կացած էրվում ա «Երեխան տաքության մեջ վառվում է» (ԱԲ, 227): 4. Բռնել. Գիհի(ն)ք՝ տրէսնանք թալակը նի յա՞ կացալ, թա չէ «Գնանք տեսնենք թակարդը որեւէ կենդանի է բռնել, թե ոչ»:

Նի կըցընէլ պատճառականն է նի կէնալ բայի, որ գործածվում է թե՛ բուն և թե՛ փոխաբերական նշանակությամբ. Կրակը նի կըցըրու, լամբը նի կըցընէք՝ «Կրակը, լամպը վառեք»։ Իստըս նի մէլ կըցէնէլ «Ինձ մի զայրացնի»:

Նի կըլէլ (<կուլթ արմատից). Հառել, ուշադրությամբ նայել մի բանի. Աճկը նի կըլից (ԹՄԿ, 239):

Նի կօխէլ (<կոխելից). 1. Ուժով խոթել, մտցնել. էտ մէխը նի մէ կոխել պատը «Այդ մէխը մի խոթի պատը»: 2. Լցնել՝ բերնեբերան. Մի խալվար նի կօխած ցօրէն ըն պէրալ «Մի խալվար բերնեբերան լի ցօրեն են բերել»:

Նի կօկէլ (<կոկելից). Լավ հարել, կոկել. Մուշաք նի յա կօկալ, տրէռալ ա թիմիշա:

Նի կուտօրէլ (<կոտորելից). Վրան կտրտել, մանրել. էն կընանշան պէնան նի կըտօրէ, վէր խրրավածը համըէղ ինի «Այն կանաչից բանից կտրտիր խորովածի վրա, որ համով լինի»:

Նի կուտուրաւէլ (<կոտորատելից). 1. Կտրտել, շատ մասերի բաժանել. 2. Խիստ ծեծել. Կըլխէն էնքան նի յըն կուտուրաւալ՝ կ'իժվալ ա «...Շատ ծեծելուց գժվել է»։ 3. Մաղր. Ռուսէրէն լավ ա նի կուտուրաւըմ՝ կուտուրտէս «Ռուսերեն լավ է ջարդում»:

Նի կըտրէլ (<կտրելից). 1. Խոր կտրել. Փօրքաշը նի յա կըտրալ էշին փուրատակը յարա ըրալ: 2. Նման. Յօրտը նի յա կըտրալ շուրը վըսկըրնէն «Յօրտը հասել էր մինչև ոսկորները»։ 3. Զեմ կարոտել՝:

Նի հաւնէլ (<հասնելից). Հակահիշ է հաւնել բայի. 1. Լցնել. Ճուղուպուրը նի հաւնէ քըսակը «Ընկույզը լցրու քսակը» (ՀԲ, 302): 2. Մի բան վեր հանել, բարձրացնել. Քարը շալակեց նի հաւնեց (ՀԲԲ, 461): 3. Փխր. շատ ուտել. Իգէն համա լավ նի հաւնող ա, հա՞ «Նա շատ ուտող է, շատակեր է»:

Նի հասնէլ (<հասանելից). 1. Տեղ հասնել, ժամանել. Վէր նի հըսնիս, ինձ դույօղ կանիս «Որ հասնես, ինձ իմաց կտաս»։ 2. Վրա հասնել, հարձակվել-խփել, ծեծել. Նի հասան իրար տվին (ՀԲԲ, 461): Մի էրկու հէտ վէր նի հըսէլըսէ, պըրանվից «Մի երկու անգամ որ խփեցի՝ շրջվեց (ընկավ)»։ Նի հըսցընէլըսցընէլ պատճառականը նի հասնել բայի. Մի քանէ հէտ վէր նի հըսցընէլըսցընէլ պըրանվից «Որ հասցրի, փռվեց, ընկավ»:

Նի հարէլ (<հարելից). 1. Լավ հարել, տրորել. Հանց նի հարէ, վէր մի պէն տոսկ'ա: 2. Քսվելով մաշկը վիրավորել. Փալանը նի յա հարալ ճօրուն մաշկը ջիղավ ըրալ «Համետը հարել-վիրավորել է ջորու մաշկը»։ 3. Սաստիկ տրորել, ծեծել. «Հանց նի յա հարալ պըկէն, վէր խիփալվալա «Այնքան է տրորել կոկորդը, որ ուշադնաց է եղել»:

39 Ղարաբաղի բարբառի համար բերված նի կտրել բայի չեմ կարոտել իմաստը մեղանծանոթ է. «Առե՛ք քեզ նի ըմ կըտրալ նախադասությամբ խոսողը արտահայտում է իր բացասական վերաբերմունքը, որ հավասարազոր է «բեզ չեմ կարոտել» իմաստին (տե՛ս Ա. Բաթաթյան, Նի. լլու (ո՛ւ) և իբ մասնիկները Ղարաբաղի բարբառում, էջ 231):

Նի հավաքելի||վրհաբէլ (<հավաքելից)։ 1. Բոլոր կողմերից հավաքել գեպի կենտրոնը. էտ շիրիրան լավ նի վրհրէցէֆ', վեր յուխտօտէ վէշ։ 2. Փխբ-գործածվում է որպէս անվայելու՝ գոնհիկ բառ՝ զուգավորել նշանակությամբ։

Նի հունցելի||հօնցէլ (<հունցելից)։ 1. Հավ հունցել, տրորել. Տաշտէն խըմօրը լավ նի հօնցէլ, վէր թըխէս տրէղը կուտանա շի տրէն/ն/ա։

Նի նրոաք'իլ (<նառագել՝ ճառագայթելից)։ 1. Համատարած պայծառ լուսավորել. Հըմբէրէն լուսան տօնը նի յա նրոաք'ալ «Համպերի պայծառ լույսից տունը համատարած ողողվել է»։ 2. Նման. Առատ ու ճոխ ծաղկել կամ պտղաբերել. Ծառէրը ծաղկալըն, էնա բաղերը նի նրոաք'ած։

Նի մաշիլ (<մատշիլ՝ մերձենալ, մոտենալից)։ 1. Հանդգնել, խիզախել, ընդհուպ մոտենալ, մերձենալ, խառնվել մի գործի՝ վստահ լինելով իր ուժերին. Աշկըտ պարին տէսնա, սաղ շէնը վրէննի ա կաղնըմ, կովին նի մաշըմ (Ջուռնա-տմբլա, Բ, 193)։ Արա վախիս վէշ, նի մաշի, տրբանց լուխշին սիրփիլ-լական ընթ «Չվախենաս, միջամտիր, խառնվիր (կովին), դրանց բոլորին ջարդելու ենք»։ Այստեղից էլ՝ նի մաշօղ ենթակայական դերբայը. Նի մաշօղ խօխա յա, բսկի վախ շօնէ «Անվախ երեսա է, բոլորովին վախ չունի»։

Նի մրնալ (<մնալից)։ 1. Շվարել, շմեկ. Խէ էնըս նի մնացած թնշո՞ւ ևս ալդպէս շվարած»։ էնըս մի տեսակ է նի մրնացած թի տեսակ շմած ևս»։ 2. Սպասել. Նի մրնացէֆ մինչև գամ (ՀԲԲ, 3, 461)։ 3. գործ է ածվում իբրև եղանակավորող բառ՝ պատասխանական նախադասություններում՝ չեմ կարող արտահայտություն նշանակությամբ։ Օրինակ՝ Աթուն ք'իսի մըխրէգ՝ ճոբ պէր «Հարություն, դնա մի քիչ ջուր բեր»։ բացասական պատասխանի դեպքում ասվում է՝ նի յըմ մրնացալ, այսինքն՝ չեմ կարող, չեմ գնում։

Նի մրտնէլ||մրննէլ||մընէլ (<մտանելից)։ 1. Մտնել ներս. Դուռը բաց արեց նի մտալ (Պոռշ. 1, 85)։ Նրանք նի մտան Աբարանու քանդված եկեղեցին (ԽԱ, 3, 131)։ Այան, այան, մօկընը նի մրտալ ծակը «Նանի, նանի, մուկը մտավ անցքը» (ՀԲ)։ Մէլքումա ուրէն քարուն քըմակաց գուլլա-գուլլա վէրա թըփէլէն Արասիսը նէ մրտօղլէն վէրա (Մեղ. բարբառ., 379), ...Ջուրէն բէոնը վէրան նէ մրտէս գէտը (ն. տ., 393)։

Նի շարէլ (շարելից)։ 1. Հավ դասավորել, իրար ետևից կանոնավոր շարել. Հանց նի շարէլ, վէր շի տրէն/ն/ան «Այնպէս լավ դասավորիր, որ չթափվեն»։ 2. Շարունակ ասել, խոսել, առանց ուշադրություն դարձնելու՝ խոսակիցը լսողւմ է իրեն, թե ոչ. Նի շարից, համա պէն շի կըլխու ընդէ։ Գործողու-լյան ընթացքը և տեականությունը ուժեղացնելու համար հաճախ բայը կըրկընվում է՝ նի շարից-նի շարից։

Նի շըլօլէ||շըշօլիլ (<շուլալելից) և սրա կրավորակերպը՝ նի շըլօլվէլ. փաթաթվել մի բանի մեջ. համապատասխանում է ռուսերենի окутать, окутовать, окутаться, окутываться բայաձևերին, ինչպէս՝ Մէլ րախան նի յա շըլօլվալ յուրդանէն մաշը «Մեր երեսան փաթաթվել է վերմակի մեջ», Հանց նի շըլօլէ, վէր վէր շի տրէն/ն/ա «Այնպէս փաթաթիր, այնպէս մտցրու, որ չըլափվի»։

Նի շըռէլ (<շրոնելից)։ Աչքերը լայն բանալ, ականպիշ նայել՝ զարմանքից կամ որևէ ալլ անակնկալից. Հունշուլը՞ս աշկէրըտ նի շըռալ «Ինչո՞ւ ևս չըռած աչքերով ինձ նայում»։ Նի շըռած աշկէրտ վէր ք'իսի «Չոած աչքերդ վայր՝ խոր դնան»։

Նի պրահնէլ (<պարաննէլից). 1. Շատ անգամ հարվածել, խփել, ծեծել. էտ ծէրքէտ մըհակավը նի պրահնէլ, թող պիւղի «Այդ ձեռքիդ մահակով շատ անգամ խփիր, թող ամրանա»։ Վաննն մուշաք նի յըն պրահնալ, հալալ ընգալ ա «Վաննուն անքան են ծեծել, որ հալից ընկել է»։ 2. թեքել, շրջել մի կողմի վրա՝ մի բանի մեջ. Արիսը վէրում քանդալ նի պրահնալ մէր լըքէրին յըրա «Առ-վի չուրը շրջել եմ մեր մարգերի վրա»։ էտ ծէրքէնրտ էլ նի պրահնէլ գուրգըս «Այդ ձեռքինդ էլ լցրու՝ շրջիր գոգս»։ Նի պրահնալ՝ բազմապատկականը նի պրահնէլ բալի. բազմաթիվ անգամ խփել տարբեր տեղերից՝ մեկի կամ շատե-րի կողմից. Նի յըն պրահնալ շինալ քէշա «Այնքան են տարբեր տեղերից շատ անգամ խփել, ծեծել կամ հարվածել, որ դարձել է թաղիք»։

Նի պրծնէլ (պրծնէլից). 1. Արագ ներս խցկվել. Ինքն էլ քամակիցս նի պրծալ (Պոռ., 1, 141), հուստորու տըէղան նի շի պրծընիս, քէզ թուղուական շըն «Իզուր ներս շխցկվես, քեզ շեն թողնելու»։ Նի պրծըցընէլ՝ պատճառ-կանը նախորդի. Ուժով ներս խոթել. Վէր նի պրծըցընիս գիղըմըս||գիղաըսս թա տուս շի կ'ըլական «Որ ներս խոթես, կարծում ես թե դուրս չի՞ գալու»։

Նի սըմկէլ (<սմքելից). Շատ թոշնել, սմքել. Ըստրա նի սըմկաժ թուշե-րին յէշի հալալ «Սրա սմքաժ թշերին նալիր»։

Նի տալ (տալից). 1. Լցնել. Փաղը նի տօ շուվըստանը «Փալտը լցրու ձեղ-նահարկը»։ 2. Կպցնել, հպել. Մեռքրտ նի սէ տալ ինձ «Ձեռքդ մի կպցրու ինձ»։ Ծիլէն իրէսուն նէ տալէն բանտան կրտրէսի (Մեղրու բարբ., 372)։ 3. Փխբ. Շատ ուտել. Միալար նի ա տալի, ու դեռ ասում ա թա թափանիս մի դիհը դար-տակ ա (Պոռ., Հաց. խնդ., 70), Լավ ես նի տալի։ 4. Փխբ. Չարախոսել, բամ-բասել մեկին։

Նի փըշըլ (<փշըրելից). Մանրել՝ լցնել մեջը. Հացը նի փըշըլ, թող կը-կըղէ «Հացը մանրիր, լցրու մեջը, թող կակղի»։

Նի ֆաղէլ (քաղելից). 1. Մտցնել. Ասըէղը տար նի ֆաղէ ըսըղամանը. Մէսը նի ֆաղէ շամփուրը «Միսը մտցրու շամփուրը»։ 2. Նման. դործածվում է իբրև անվանելու բառ՝ ղուգավորել նշանակությամբ։

Նի ֆըսէլ (քսելից). Լավ քսել, շոշափել, տորրել. Տէնակը նի ֆըսէ սըղա-լը, թող սըրէ «Դանակը քսիր սրոցին, թող սրվի»։ Մէռքավըտ նի ֆըսէ, տըէս տաք ա՞ «Ձեռքովդ շոշափիր, տես տա՞ք է»։ էնչաք նի յա ֆըսալ՝ իրէսը կ'ըրմի-րալ ա «Այնքան է տորրել, որ երեսը կարմրել է»։

Նի ֆաշիլ (<քաշելից). 1. Անցկացնել մեջը. Մէսը նի ֆաշի շամփուրը։ 2. Փխբ. կոնծել, խմել՝ միանգամից. էս մի կըրափինկան⁴⁰ էլ վէր նի ֆաշիս՝ կըլօխրտ լավ կըտրքանա «Այս մի գրաֆինն էլ որ խմես, գլուխդ լավ կտաքա-նա»։ 3. Վեր բարձրացնել. Ես ընդրանա պէն հըրըցըրէ, իզէն օսերը նի ֆաշից «Ես նրանից բան հարցրի, իսկ նա ուսերը վեր բարձրացրեց»։

Նի փըփաթէլ||պըտըտօրէլ (<փաթաթել, պատատորրել). Շատ անգամ, շատ տեղերից փաթաթել ներսի կողմի վրա. Հանց նի պըտըտօրէլ, վէր յէտ տալը հիշտ լինի «Այնպես փաթաթիր, որ հեշտ արձակվի»։

Նի փըրթիլ||փիթիլ (<բրդելից). Հացը բրդել, մեծ-մեծ պատառների բա-ժանել ու լցնել ափսեի մեջ. Հացը նի յըն փի/բ/րալ, քամաժ մաժունն էլ յըրա «Հացը բրդել են ամանի մեջ, քամաժ մաժունն էլ վրան»։ էնչաք նի փիթի, վէր օտիս «Այնքան բրդիր, որ ուտես»։

40 Խոսքը պրաֆինի պարունակության մասին է։

Նի օնել (ունելից). 1. Մի բանի վրայից վերցնել. Ճորրը վիզրավը նի ելալ պէր «Ջուրը դուլլով վերցրած՝ բեր»: 2. Տեղալ սկսել. Թօռը նի կալալ «Անձրե-վըն սկսեց դալ»: Ծունը վէր նի կալալ, էլ վէրչ չի կա «Ձյունը որ սկսեց դալ, էլ վերջ չկա». Կարկօտը նի օնելը բաթ վըրսէցէն տօն «Կարկուտը սկսվելուն պես փախան տուն»: 3. Պատել, տարածվել, լցվել. Ծօխը նի յա կալալ տօնը ըշկըրնէս բուռոցրալ «Ծուխը տարածվել, լցվել է տունը, աչքներս կուրացրել»: 4. Փխբ. բռնել. Յավը նի յա կալալ ջանը: Նի օնել, նի կալալ գործածվում է որպես միադիմի բայ անձրեում է նշանակությամբ. հականիշն է՝ յէտ կալալ՝ դադարեց:

Նի ՄԱՍՆԻԿԻ ԴԻՐՔԸ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Նի մասնիկն անբաժան է խոնարհման բոլոր ձևերից: Անդամ դերբայական ձևերում նի-ն միշտ նախադաս է, մինչդեռ եղանակային ձևերում այն կարող է ետ ու առաջ ընկնել՝ կախված տրամաբանական շեշտից և խոսքային միջավայրից: Սովորական շարահասություն ժամանակ զխավոր բաղադրյալ ժամանակներում օժանդակ բայն ընկնում է նի մասնիկի և դերբայի միջև, իսկ շրջուն շարահասության դեպքում, ընդհակառակն, մասնիկը շարահասվում է դերբայից անմիջապես առաջ, որին (նի-ին) նախորդում է օժանդակ բայը⁴¹:

Պայմանական և հարկադրական եղանակներում նույն հիմունքով նի-ն կարող է եղանակից և առաջ լինել և հետո: Հրամայական եղանակի բոլոր ձևերում նի-ն միշտ նախադաս է: Նույն կանոնն անփոփոխ պահպանվում է նաև ժխտական խոնարհման ժամանակ:

Ամփոփելով ամբողջ շարահարանքից բխող եզրակացությունները առանձնապես անհրաժեշտ է ընդգծել հետևյալը.

1. Բայական հարադրություններում հանդես եկող նի (<նէ) մասնիկը ընդհանրացել է հիմնականում արևելահայ բարբառներում և լայն տարածում ստացել Արարատյան, Ղարաբաղի, Հաղրութի, Մեղրու և այլ բարբառներում ու խոսվածքներում. մինչդեռ արևմտահայ բարբառներում կղզիացել է ու շատ սահմանափակ կիրառություն ունի:

Բայի կազմության մեջ նի-ն առանձնակի դեր է կատարում. այն որոշ դեպքերում նաև բառակազմական ձևության արժեք ունի. նրանով ինչպես ե, այնպես էլ ա խոնարհման բայերից կազմվում են նոր բայեր, որոնք իրենց արտահայտած իմաստային հարաբերություններով տարբեր են սկզբնատիպ ձևերից (ինչպես՝ կենալ և նի կենալ՝ վառվել, բորբոքվել, գալ և նի գալ՝ կ'ալ՝ դիպչել, կպչել, վիրավորել, պարանել «շրջել» և նի պարանել՝ ծեծել, հարվածել, դնել և նի դնել՝ տնիլ՝ սկսել, մնալ՝ նի մնալ՝ շվարել, շշմել և այլն, իսկ հաճախ էլ ցույց է տալիս հարադրվող բայի գործողության ուղղվածությունը դեպի ներս, դեպի դուրս, դեպի վեր ու դեպի վար՝ լրացուցիչ կերպով արտահայտելով իմաստային այլևայլ նրբիմաստներ ու երանգներ (ինչպես՝ նի մրա-նել՝ ներս մտնել, նի լակել՝ վրա ծեծել, նի կոխել՝ ներս խոթել, նի ծրծել՝ ներ-ծծել, նի լիկել՝ վեր բարձրանալ և այլն):

2. Լեզվական իրադրությունները վկայում են, որ նի մասնիկի գոյությունը նոր չէ հայերենում. նրա սկզբնավորումը գալիս է դարերի խորքից, սակայն

⁴¹ Միայն հարակատար և անցյալի հարակատար ժամանակներում օժանդակ բայը կարող է դրվել դերբայից հետո:

այն նախապես եղել է մի քանի բառերի մեջ, որոնցից են նիստը (և նի խոթել), նայել (նի հայել), նստել, նիստ և այլն): Լեզվի տվյալ փուլում ոչ կենսունակ այդ տարրը հետագայում, շատ ավելի ուշ, զարգացել ու տարածվել է ընդհանրացման շնորհիվ և դարձել կենսունակ երևույթ որոշ խմբի բարբառներում առաջացած անհրաժեշտության պահանջով: Թեև, ճիշտ է, հին և հնագույն շրջանի պրավոր աղբյուրներում նի մասնիկի չենք հանդիպում, ի բացառյալ վերի օրինակները, բայց XVII—XVIII դարի հեղինակ Նաղաշ Հովնաթանի մոտ գործածված նի ֆցեց⁴² ձևը հուշում է, որ այն տարածված է եղել խոսակցական բանավոր լեզվում, սակայն չի մտել գրականության մեջ, ինչպես որ բարբառային շատ իրողություններ այսօր էլ թեև կենդանի ու գործուն են ժողովրդի խոսակցական լեզվում, բայց գրականության մեջ չեն մտնում որպես նեղ բարբառային երևույթներ:

3. Նի մասնիկի հատկանշական ու բնորոշ առանձնահատկություններից մեկըն էլ այն է, որ հարադրվող բայի բազում ու տարաբնույթ նշանակությունները կամ առումները խիստ սահմանափակում, նեղացնում է՝ նրանցից թողնելով մեկ-երկուսը, կամ էլ բառին հաղորդում է նոր իմաստներ ու իմաստային նրբերանգներ:

4. Բառակազմության մեջ հանդես եկող նի մասնիկի ձևաբանական դերը հատկանշվում է նաև նրանով, որ առանձին դեպքերում ունակ է սեռային փոփոխություն առաջացնել՝ ներգործական բայերը դարձնելով չեզոք սեռի, կամ էլ՝ միևնույն բառույթի սահմաններում դրսևորել կրկնասեռություն (ինչպես՝ դնել, պրծնել ներգործական սեռի բայեր են, բայց նի դրնել, նի պրծնել՝ չեզոք):

5. Բայական մի շարք ձևերում նի-ն հարադրվող բայի հետ իմաստային ձուլվ միասնություն է կազմում և առանց հիշյալ մասնիկի բայերն առանձին չեն կարող գործածվել ու չեն գործածվում (ինչպես՝ նի մըտնել, նի մաշիլ, նի հէտ անէլ, նի հէտ տալ և այլն):

6. Նի-ն, իբրև ևտադրություն, իրականում տարբեր է բայականի նի մասնիկից, ևտադիր նի-ն համեմատաբար ուշ շրջանի գոյակցություն է և, ըստ իս ստացվել է իյէր (<ի վեր) բաղադրյալ կապի յէր (<վեր) բաղադրիչի սղումից և ի նախդրի ու նրան նախորդող և հոդի միացումից՝ համաձայն շարադրանքում տրված բացատրության:

7. Նի ևտադրությունը Ղարաբաղի և Հաղրութի բարբառներում զրվելով որոշյալ հայցականով կապվող բառի հետ՝ դրսևորում է տրական և գործիական հոլովների իմաստ, իսկ Մեղրու բարբառում՝ գործիականի և ներգոյակալի⁴³ իմաստ: Նմանօրինակ նախորդվ հայցականը շարժում ցույց տվող բայերի հետ ցույց է տալիս տեղ, տարածական հարաբերություն՝ նշելով նաև գործողության ուղղությունը կամ ուղղվածությունը (ինչպես՝ կէտընի, արտրնի և այլն⁴⁴):

8. Ետադիր նի-ն ժամանակի իմաստ արտահայտող բառերի որոշյալ հայցականի հետ ցույց է տալիս մի ժամանակամիջոց կամ ժամանակահատ-

⁴² «Գինոյ կուծն կշտիցն ցըցել, Սկուտէն լցաւ, նի քցեց» (Բան. 141): (Տե՛ս Ա. Մ ա ր ա ղ ա ն, Նշվ. աշխ., էջ 138):

⁴³ Հմմտ. է. Ա ղ ա յ ա ն, Մեղրու բարբառ, էջ 170: Նկատենք, որ Ղարաբաղի, Հաղրութի և Կարճևանի բարբառներում նի ևտադրությունը ներգոյակալան հոլովի իմաստ չի արտահայտում:

⁴⁴ է. Աղայանը բացառում է ուղղության հանգամանքը (տե՛ս «Մեղրու բարբառ», էջ 171):

ված, որի ընթացքում տեղի է ունենում գործողությունը (ինչպես շէրաթընի, ամէսընի, տարէնի և այլն):

9. Ղարաբաղի և Հաղրութի բարբառներում նի մասնիկը հարադրվելով գոյականների և դերանունների սեռական-տրական հոլովաձևերին՝ որպես հետ կապի բաղադրիչ, ցույց է տալիս հանգում, վերաբերություն և փոխադարձ գործողությամբ կապված առարկաների (կամ անձերի) սերտ միասնության հարաբերության (ինչպես՝ ինձ նի հէտ «ինձ հետ», քըղնը հէտ «քեզ հետ», հուր նի հէտ «ու՛մ հետ», կ'ուլու նի հէտ «գայլի հետ», քարէն նի հէտ «քարի հետ» և այլն):

10. Նի ետադրությունը Կարճեանի բարբառում ունի յուրահատուկ կիրառություն, այն դրվելով տեղ, տարածական հարաբերություն ցույց տվող ըստր, ըղի, ինղի ցուցական դերանունների հետ, դրսևորում է գործիական հոլովի իմաստային հարաբերություն, ինչպես՝ իստիսնի, իղիսնի, ինղիսնի⁴⁵:

ՀԱՄԱՌՈՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱԲ—Ա. Բարայան, Նի, լյու (լու) և իք մասնիկները Ղարաբաղի բարբառում (առանձնատիպ «Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածուից», № 6, I մաս, Երևան, 1960):
- Զուռնա-տմբլա—Մ. Շահնաղարյանց, Զուռնա-տմբլա, Վաղարշապատ, Ա գիրք, 1907, Բ գիրք, 1908:
- ԹՄԿ—Տեր-Աղեքսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կեանքը, Թիֆլիս, 1886:
- ԽԱ—Խ. Առովյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1948—1955:
- ҚП—Қ. Патканов, Исследование о диалектах армянского языка, СПб., 1869.
- Հայոց բառ ու բան—Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:
- ՀԲԲ—Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան 4 հատորով, Երևան, 1944—1945:
- ՀԺՀ—Հայ ժողովրդական Ֆեթիաթներ, Երևան, 1962:
- ՀԲ—Ա. Պողոսյան, Հաղրութի բարբառ, Երևան, 1965:
- Նման.—Նմանակությամբ:
- Պռռ.—Պ. Պռռյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, Երևան, 1962:
- Փխր—Փոխաբերական կամ փոխաբերաբար:

ЧАСТИЦА НИ И ЕЕ СЛОВООБРАЗОВАТЕЛЬНО-СМЫСЛОВОЕ ЗНАЧЕНИЕ В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ

А. М. ПОГОСЯН

(Р е з ю м е)

В статье рассматриваются вопросы образования, распространения частицы *ни* и ее словобразовательно-смыслового значения. В ней в частности, показано:

а) *ни* в сочетании с неопределенной формой глагола может образовывать новые глаголы, которые по своим смысловым значениям отличаются от первоначальных глагольных форм. Например, «кенал» — обитать и «никенал» — зажигаться, горячиться, «гал» — прийти и «нигал» — прилепнуть, липнуть, «днел» — поставить и «ниднел» — начинаться;

⁴⁵ Նի-ից առաջ ս-ն նմանականությամբ ընդհանրացված ստացական հոդ է համարվում (տե՛ս Հ. Մուրադյան, Կարճեանի բարբառը, Երևան, 1960, էջ 114):

б) частица *ни*, присоединяясь к глаголу, ограничивает его многозначность, оставляя один-два значения, или придает слову новые смысловые оттенки;

в) глагольная частица *ни* может образовать залоговые изменения: переходные глаголы сделать непереходными. Например, «днел» — положить, «прцнел» — окончить — переходные глаголы, а «ни днел» — начинаться, «ни прцнел» — втиснуться — непереходные;

г) суффикс *ни*, по нашему мнению, отличается от глаголообразующей частицы *ни*. Суффикс *ни* (например, артни, гетни, ересни и другие формы), по нашему мнению, образование более позднего периода, которое, по всей вероятности, формировалось от составного послелога «и вер» согласно изложенной интерпретации.